

ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՋՐԵՐ

2024թ. II եռամսյակ

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգն իրականացվել է ազգային ցանցում ընդգրկված 119 դիտակետում, այդ թվում՝ 25 շատրվանող հորատանցք, 35 չշատրվանող հորատանցք, 12 գրունտային ջրհոր և 47 բնաղբյուր: Դիտակետերում կատարվել են ջրի ծախսի, մակարդակի և ջերմաստիճանի չափումներ ամսական 6 անգամ հաճախականությամբ:


Ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ իրականացվել է 55 դիտակետերում՝ որոնցից յուրաքանչյուրում որոշվել է շուրջ 40 ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, աղային ռեժիմի տարրեր, մետաղներ):

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 2 բնաղբյուրում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի և ծախսի չափումներ: Դիտակետերը գտնվում են Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղում:





Հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում N2058 դիտակետում ջրի ծախսը նվազել է՝ 0.53լ/վ-ից հասնելով 0.39 լ/վ: N2059 դիտակետում դիտվել է ջրի ծախսի կայունացում՝ 0.17լ/վ սահմաններում:

Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է N2058 բնաղբյուրում, որտեղ հանքայնացման, նիտրատ, սուլֆատ և քլորիդ իոնների պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 1. Հյուսիսային ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները

ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԵՏԱՆՈՎԱՆ ԿԵՐԱՆԵՐ

- Սարգիներտուններ
- Բաղաբներ
- Բավարկայրեր
- Սակերևութային ջրերի**
- ▲ Օրակի անիթթորինգի դիտակետեր
- ▲ Հիդրոբազմակարգի դիտակետեր
- ▲ Ստորեկյուղ ջրերի անիթթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք
- Սակերևութային ջրերի որակի դասեր**
- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 40 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:

Ախուրյանի ՋԿՏ-ի Արարատյան արտեզյան ավազանի հատվածում՝ Ակնաշենի N108, N198, Վարդանաշենի N1533, Արագափի N1537, Տարոնիկի N2018 և Հայկավանի N2025 դիտակետերի հորատանցքերում հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին նկատվում է ջրի մակարդակների բարձրացում:


Գայի N1521, Ջրառատի N2021 և Ակնաշենի N2001 դիտակետերի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսի և մակարդակի ցուցանիշները բարձրացել են:

Հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Արագածավանի N2080 և Մյասնիկյանի N2082 հորատանցքերում նկատվել է ջրերի մակարդակների բարձրացումիսկ Արտամետի N2083 և Արտենիի N2081 դիտակետերում՝ իջեցում:


Գյումրիի N2030, N2037, Մարմաշենի N2032, N2035, Աշոցքի N2039, N2040, N2041, Ցողամարզի N2077 դիտակետերի աղբյուրներում դիտվել է ջրի ծախսի կայուն վիճակ՝ աննշան տատանումներով:

Առափիի N2042 դիտակետի ջրհորի ջրի մակարդակը եղել է կայուն, իսկ Ախուրյանի N2043 ջրհորի ջրի մակարդակը իջել է ավելի քան 60 սմ-ով: Ակնաշենի N199, Ապագայի N2020 և Լուսազյուղի N2022 ջրհորներում դիտվել է ջրի մակարդակի բարձրացում :


Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 19 դիտակետում: Լուսազյուղի (N2022), Առափիի (N2042) գյուղերի գրունտային ջրհորներում, ինչպես նաև Արտամետ (N2083) գյուղի հորատանցքում հանքայնացման ցուցանիշները գերազանցել են համապատասխան ՍԹԿ-ն: Մարմաշեն գյուղի (N2035) աղբյուրի դիտակետում նիտրատ իոնի կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն, իսկ Առափի գյուղի (N2042) գրունտային ջրհորում՝ նիտրատ և սուլֆատ իոնների պարունակությունները: Լուսազյուղի (N2022) գրունտային ջրհորի ջրում դիտվել է արսենի պարունակության գերազանցում համապատասխան ՍԹԿ-ից:




Պատկեր 2. Ախուրյանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 3. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 4. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները







Գծապատկեր 5. Ախտրյանի ՋԿՏ-ի չջատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները




Գծապատկեր 6. Ախտրյանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակների փոփոխությունները




Գծապատկեր 7. Ախտրյանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի հանքայնացումը



Գծապատկեր 57. Ախտորյանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում նիտրատ իոնի պարունակությունը





Գծապատկեր 58. Ախտորյանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում սուլֆատ իոնի պարունակությունը



Գծապատկեր 59. Ախտորյանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում արսենի պարունակությունը

ՀՀ Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի**
- ▲ որակի մոնիթորինգի դիտակետեր
- ▲ հիդրոլոգիական դիտակետեր
- ▲ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հարավային ջրավազանային կառավարման տարածք

- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- ▲ 3-րդ դաս
- ▲ 4-րդ դաս
- ▲ 5-րդ դաս



Հրագրանի ջրավազանային կառավարման տարածք

Հրագրանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական հատկանիշների մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:


Հրագրանի ՋԿՏ-ի Արարատյան արտեզյան ավազանի հատվածի Դաշտավանի N1526, Միսի N1535, N1536, 2003 և Ջրահովիտի N2007 դիտակետերի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերը և մակարդակները, աննշան տատանումներով, կայուն են: Ծախսի և մակարդակի ավելացումներ են նկատվել Հովտաշենի N2008 և N2053 և Մասիսի քաղաքի N1519 դիտակետերի շատրվանող հորատանցքերում:

Արարատի մարզի Հայանիստի N2005 հորատանցում, ինչպես նաև Արմավիրի մարզի Գրիբոյեդով (N2056), Արագած (N2085) և Աղավնատուն (N2087) գյուղերի հորատանցքերում ջրի մակարդակը բարձրացել է 0.20 մ-ի սահմաններում: Միս (N78), Դողզ (N2086), Լեռնամերձ (N2088) և Կարբի (N2089) գյուղերի հորատանցքերում դիտվել է մակարդակի կայուն վիճակ: Ջրահովիտի (N2004) և Փարպիի (N2119) հորատանցքերում ջրի մակարդակը իջել է 0.30-0.40 մ համապատասխանաբար:

Նիզավան բնակավայրի ջրհորներում (N2010, N2011) նկատվել է ջրի մակարդակի իջեցում, իսկ գյ.Խորոնքի (N2023) ջրհորում ջրի մակարդակը աննշան բարձրացել է:


Ծախսի կայուն վիճակ նկատվել է գյ.Ղազարավանի (N755) և գյ.Բուժականի (N2105) աղբյուրներում: Ապարան քաղաքի (N2051, N2107), ինչպես նաև Բջնի (N246), Սուլակ (N1297, N1832), Կարբի (N1636) և Բյուրական (N2108) բնակավայրերի աղբյուրներում ծախսը նվազել է: Երևան քաղաքի N970 դիտակետի ջրի ծախսը ավելացել է շուրջ 0.7 լ/վ-ով:

Հրագրանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 13 դիտակետում: Մասիս քաղաքի (N1519) շատրվանող հորատանցքում ջրի հանքայնացումը, ինչպես նաև նիտրատ և ֆոսֆատ իոնների ցուցանիշները գերազանցել են համապատասխան ՍԹԿ-ները: Հովտաշեն գյուղի (N2053) շատրվանող հորատանցքում գերազանցվել են հանքայնացումը և նիտրատ իոնի պարունակությունը: Ջրահովիտ (N2007) գյուղի շատրվանող հորատանցքում՝ հանքայնացումը և սուլֆատ իոնի պարունակությունը գերազանցել են համապատասխան ՍԹԿ-ները:



Շատրվանոց հորատանցքեր
Ծախս, լ/վ


Հրազդանի ՋԿՏ



Գծապատկեր 9. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները

Շատրվանոց հորատանցքեր
Մակարդակ, մ


Հրազդանի ՋԿՏ




Գծապատկեր 10. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները


Չշատրվանոց հորատանցքեր
Մակարդակ, մ

Հրազդանի ՋԿՏ







Պատկեր 11. Հրազդանի ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները




Պատկեր 12. Հրազդանի ՋԿՏ-ի գրունտային ջրերում ջրի մակարդակների փոփոխությունները



Պատկեր 13. Հրազդանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի հանքայնացումը




Գծապատկեր 14. Հրագդանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում նհտրատ իոնի պարունակությունը



Գծապատկեր 15. Հրագդանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում սուլֆատ իոնի պարունակությունը

ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը (հոկտեմբեր/ 2024 թվական)



Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 15 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:



Վարդենիս քաղաքի (N1809, N1811, N1812), Վաղաշենի (N2090) և Դարանակ բնակավայրի (N2095) շատրվանող հորատացքերում հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ջրի ծախսերն ու մակարդակները գրեթե անփոփոխ են՝ աննշան տատանումներով: N1810 դիտակետում նկատվել է ծախսի և մակարդակի բարձրացում:

Ջրի ծախսի նվազում է դիտվել Գանձակ (N2013) և Վաղաշեն (N2090) գյուղերի շատրվանող հորատանցքերի դիտակետերում: Դարանակ գյուղի (N2095) դիտակետի շատրվանող հորատանցքի ծախսը եղել է կայուն՝ աննշան տատանումով:


Նվազել են Ակունքի (N31, N902, N1053), Խաչաղբյուրի (N2093) և Լիճքի (N2100) դիտակետերի աղբյուրների ծախսը: Գավառ քաղաքի (N2014) և Աղբերք գյուղի (N2091) դիտակետերի ծախսը համեմատաբար կայուն է:

Լիճք գյուղի N2101 հորատանցքի մակարդակը համեմատաբար կայուն է:


Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է Սևանի ՋԿՏ-ի 8 դիտակետում: Հանքայնացման, նիտրատ, սուլֆատ և քլորիդ իոնների պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:




Գծապատկեր 16. Սևանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները



Փճապատկեր 17. Սևանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները




Փճապատկեր 18. Սևանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները




Փճապատկեր 19. Սևանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի հանքայնացումը

ՀՀ Սևանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս
 - 5-րդ դաս



Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 23 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:



Հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Արտաշատ քաղաքի (N2062) և Դալար գյուղի (N2063) շատրվանող հորատանցքերի ջրերի ծախսը ավելացել է: Սուրենավան գյուղի (N2067) շատրվանող հորատանցքում դիտվել է ծախսի նվազում շուրջ 0.40 լ/վ-ով:

Արտաշատ քաղաքի (N2064, N2069), Մրգավետ գյուղի (N2052) հորատանցքներում դիտվել է ջրի մակարդակների բարձրացում: Ջրի մակարդակը իջել է Եղեգնուտ (N2065) գյուղի հորատանցքում, իսկ Լուսառատ (N2074) գյուղի և Արարատ քաղաքի (N2076) հորատանցքերում ջրի մակարդակը գրեթե չի փոփոխվել:


Վեդի քաղաքի (N2006) և Դալար գյուղի (N2072) գրունտային ջրհորներում դիտվել է ջրի մակարդակի բարձրացում, սակայն Արտաշատ քաղաքի (N2073) և Արմաշ գյուղի (N2075) գրունտային ջրհորներում ջրի մակարդակն իջել է համապատասխանաբար 0.91 և 0.17 մ-ով:

Մալիշկա (N502), Եղեգնաձոր (N787), Գառնի(N2046), Կեչուտ (N2060) գյուղերի և Ջերմուկ քաղաքի (N2048) բնաղբյուրներում դիտվել է ջրի ծախսի նվազում: Ագարակաձորի (N785), Գառնիի (N845, N2047) բնաղբյուրներում դիտվել է ջրի ծախսի կայուն վիճակ:


Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 10 դիտակետում: Սուրենավան գյուղի (N2067) դիտակետում հանքայնացումն ու քլորիդ իոնի կոնցենտրացիաները գերազանցել են համապատասխան ՍԹԿ-ները: Արտաշատ քաղաքի (N2069) դիտակետում գերազանցվել են հանաքայնացումն ու նիտրատ իոնի կոնցենտրացիան:




Գծապատկեր 20. Արարատյան ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 21. Արարատյան ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 22. Արարատյան ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները




Գծապատկեր 23. Արարատյան ՋԿՏ-ի չշատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները




Գծապատկեր 89. Արարատյան ՋԿՏ-ի ֆրունտային ջրհորներում ջրի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 24. Արարատյան ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի հանքայնացումը




Գծապատկեր 25. Արարատյան ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի նիտրատ իոնի պարունակությունը





Գծապատկեր 26. Արարատյան ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի սուլֆատ իոնի պարունակությունը

ՀՀ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԻՇԱՆԵՐ**
- Սարգիենտրոններ
 - Բաղարներ
 - Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի**
- ▲ որակի մոնիթորինգի դիտակետեր
 - ▲ հիդրոլոգիական դիտակետեր
 - ▲ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
 - Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Լճեր և ջրամբարներ
 - Արարատյան ջրավազանային կառավարման տարածք
- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս





Հարավային ցրավազանային կատարման տարածք


Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 7 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի և ծախսի չափումներ:

Շաքի (N532), Անգեղակոթ (N1175) գյուղերի և Գորիս քաղաքի (N1399) բնաղբյուրներում դիտվել է ջրի ծախսի նվազում: Գորիս (N529), Սպանդարյան (N537), Անգեղակոթ (N1323) գյուղերի և Գորիս քաղաքի (N 899) դիտակետերում ջրի ծախսը եղել է անփոփոխ:

Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 4 դիտակետում: Հարավային ՋԿՏ-ի դիտակետերում հանքայնացումը, նիտրատ, սուլֆատ և քլորիդ իոնների պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:






Գծապատկեր 27. Հարավային ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները



Գծապատկեր 28. Հարավային ՉԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի հանքայնացումը

ՀՀ Հարավային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՇԱՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր

Մակերևութային ջրերի

- ▶ Որակի մոնիթորինգի դիտակետեր
- ▶ Հիդրոգրգիական դիտակետեր
- ▶ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



